

ՅՈՂԱՆՆԵՍ ԼԵՓՍԻՈՒՍԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ  
ՎԵՐՋԻՆ ՊԱՅՔԱՐՆ ՈՒ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ

ԱՇՈՏ ՀԱՅՐՈՒՆԻ

1933 թ. Գերմանիայում ազդայնական տրամադրությունների վերելքի և իշխանությունների դուրս անցած նացիոնալ-սոցիալիստական կուսակցությունների ռասիստական ու հակասեմիտական դադափարախոսությունների զարգացման պայմաններում դարձյալ մահարեր ամպեր կուտակվեցին Հայ ժողովրդի վրա: Զանգվածային լրատվության միջոցներում լայն շրջանառություն մեջ էր դրվել Հայերի և հրեաների ռասայական նույնականությունից տեսակետը, որ հղի էր անկանխատեսելի հետևանքներով: Ի պաշտպանություն այդ տեսակետի վկայակոչվում էին զանազան «ընդհանուր հատկանիշներ» և նույնիսկ երկու ժողովուրդների պատմական ճակատագրերի միանմանությունը: Ուստի պատահական չէ, որ ինչպես «Դր. Լեփսիուսի Գերմանական առաքելություն Արևելքում» կազմակերպությունը<sup>1</sup>, այնպես էլ Հայ ժողովրդի մյուս դերմանացի բարեկամների գերխնդիրը դարձավ այդ և նման ըմբռնումների դեմ պայքարի ծավալումը: «Այն պնդումը, թե Հայերը հրեաներ են, կեղծիք է, — նշվում էր ընկերություն «Հայերը հրեաներ չեն» կոչում, — եթե նման պնդումների հեղինակները բացեն մի հանրադիտարան, կտեսնեն հակառակը, այն, որ ... Հայերը պատմության մեջ հնագույն քրիստոնյա ժողովուրդն են: Նաև ռասայական առումով Հայերը ոչ մի կապ չունեն հրեաների հետ, քանի որ նրանք սեմիտներ չեն, այլ հնդեվրոպացիներ: Նրանց լեզուն նույնպես հնդեվրոպական լեզվաճյուղ է: Մենք խնդրում ենք մեր բարեկամներին ամենուր պայքարել այդ պատմական կեղծիքի դեմ, թե Հայերին պետք է դասել սեմիտների շարքում: Հայ ժողովուրդը դերմանացի ժողովրդի հետ դարեր շարունակ ունեցել է ամենաարժեքավոր մշակութային կապերը, իր ազգային եկեղեցու հետ միասին բազմադարյան պայքարի միջոցով պահպանել է իր քրիստոնեությունը: Ով պաշտպանում է այդ թյուր պնդումը, դրսևորում է պատմության անբավարար իմացություն և ստորացնում մի ժո-

1 Die Armenier – keine Juden. – „Orient im Bild“ (այսուհետև՝ OB). Potsdam. 1933, S. 32.

2 «Գերմանական առաքելություն Արևելքում» կազմակերպությունը (Deutsche Orient-Mission)՝ դր. Յոհ. Լեփսիուսի (այսուհետև՝ Դր. Լեփսիուսի ԳԱԱ) կողմից հիմնադրվելով դեռ 1895 թ. սեպտեմբերի 29-ին, նրա ղեկավարությամբ նյութական և բարոյական հսկայածավալ օգնություն էր ցուցաբերել Հայ ժողովրդին՝ անգերազնահատելի ներդրում ունենալով համիդյան կոտորածների վերջերի սպիացման, Մեծ Եղեռնից մազապուրծ Հայության բեկորների վերընձուցման հարցում և միաժամանակ զորավիդ լինելով Հայկական հարցին ու դառնալով Հայ ժողովրդի ձայնն ու դատապաշտպանը ողջ եվրոպայում: Ընկերությունն իր համապարփակ Հայանվեր դործունեությունը նույնությամբ և անընդմեջ շարունակեց նաև իր առաջնորդի մահից (1926 թ.) հետո: 1930-ական թվականներին նրա գործունեությունը հիմնականում ուղղված էր Սիրիայում (Հալեպ, Կայա Պունար) հանդրվանած բազմահազար Հայ որբերի և միայնակ կանանց փրկության նպատակին:

ղովրդի, որը դեռ համաշխարհային պատմական առաքելութիւն ունի Արևելքի ապագայի համար»<sup>3</sup>:

Կազմակերպութեան պարբերականներում մեկը մյուսի ետևից հրատարակվում էին ծավալուն ուսումնասիրութիւններ հայ ժողովրդի պատմական անցյալի և ազգարանական, կրոնական ու լեզվամշակութային առանձնահատկութիւնների վերաբերյալ, որոնցով հիմնավորվում էր նրա պատկանելութիւնը արիական ռասային<sup>4</sup>: Զուգահեռաբար վկայակոչվում էին նաև անցյալի ականավոր գիտնականների, գործրինակ Կարլ Ֆրիդրիխ Նոյմանի, պրոֆ. Հայնրիխ Հյուրչմանի, պրոֆ. Յոզ. Մարկվարտի և այլոց հետազոտութիւններն ու տեսակետները հայ ժողովրդի մասին<sup>5</sup>: «Հայ ժողովրդի ներկայիս սփռվածութիւնն ամբողջ աշխարհում, – նշված էր Գերմանա-հայկական ընկերութեան և Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի կողմից հրատարակված հայտարարութիւններից մեկում, – պետք է պայմանավորել Թուրքիայի պետական տարածքից նրա բուն վտարումով (1915–1916 թթ.), որն այլ նպատակ չէր հետապնդում, քան մշակութապես ավելի բարձր աստիճանի վրա կանգնած քրիստոնյա ժողովրդի և Թուրքերին օտար ռասայի ոչնչացումը: ... Քանի որ Արևմուտքում հրեականութեան ըմբռնման հետ կապված է մոզաիկ կրոնի ընկալումը, անհրաժեշտ է նշել, որ հայերը որպես հնագերմաններ ոչ միայն ռասայով են հրեաներին օտար, այլև կրոնական տեսանկյունից, որպես աշխարհում հնագույն քրիստոնյա ժողովուրդը, նրանց հետ ոչ մի ընդհանրութիւն չունեն»<sup>6</sup>:

Այլ գաղափարակից կազմակերպութիւնների, մասնավորապես Գերմանա-հայկական ընկերութեան հետ սերտ համագործակցութեամբ ամիսներ շարունակ ծավալվող այդ գրապայքարը, որում ներգրավվեցին նաև գիտական, կրոնական և քաղաքական այնպիսի մեծ հեղինակութիւններ, ինչպես օրինակ, պրոֆ. Կ. Ֆ. Լեհման-Հաուպտը, դր. Պ. Ռոհրբախը, պրոֆ. Յուլ. Ռիխտերը, Սաքսոնիայի դուքս պրոֆ. Ֆոն Մաքսը, Յոհ. Ֆոն Լերսը և այլն, հասավ իր ցանկալի նպատակին. գերմանական լրատվամիջոցներում հայերի և հրեաների ռասայական նույնացմանը միտող քարոզարշավը դադարեց, և 1933 թ. հուլիսի 3-ին Գերմանիայի ՆԳ նախարարի հրամանագրով հայերը «մասնագիտական ծառայութեան վերականգնման օրենքին համապատասխան» դասվեցին արիական ժողովուրդների շարքում այդպիսով ապահովագրվելով պաշտոնավարման և այլ իրավունքների սահմանափակման օրենքներից, ինչպես և այլապես անխուսափելի դարձող ռասայական դաժան հետապնդումներից<sup>7</sup>:

3 Նույն տեղում: ՕԵ, 1933, Տ. 32.

4 G. H e t z e l. Wie das älteste Christenvolk zu seinem Glauben kam – ՕԵ, 1933, Տ. 34–35, 37; Die Zugehörigkeit der Armenier zur arischen Rasse (Mitteilung der Deutsch-Armenischen Gesellschaft. Berlin), Տ. 38.

5 Rassentum der Armenier. – „Der Orient“ (այսուհետև՝ ՕՕ). Potsdam, 1933, Տ. 65–66.

6 Die Zugehörigkeit der Armenier zur arischen Rasse (Mitteilung der Deutsch-Armenischen Gesellschaft. Berlin). – ՕԵ, 1933, Տ. 38.

7 R. S c h a f e r. Mitteilungen. – ՕԵ, 1933, Տ. 51. Հմտ. Армяне-арийцы. – Сборник монографий, СПб., 1995, с. 6. Նախարարի դեկրետի վերաբերյալ առաջին հրատարակյալն իրագրվում էր, ինչպես թույլ է տալիս կոաչել Պ. Ռոհրբախի տեղեկութիւններից մեկը, կատարվել է 1933 թ. օգոստոսի 31-ին ՆԳ նախարարութեան ռասայագիտութեան փորձագետի կողմից կատարված մի գրավոր տեղեկութեան միջոցով. իսկ սեպտեմբերի

Այդ հաղթանակը մեկընդմիջտ ապահովագրելու և հետագայում այլևայլ նենգափոխումների ու կեղծումների հնարավորությունը բացառելու նպատակով 1934 թ. լույս ընծայվեց նաև «Armeniertum und Ariertum» («Հայկականությունը և արիականությունը») աշխատությունը՝ հանրությանը ներկայացնելով գիտական և փաստագրական համակողմանի հիմնավորումներով հայ ժողովրդի արիական պատկանելությունը փաստող 10 ծավալուն հոդվածներ՝ հեղինակված պրոֆ. Շայդերի, է. Շթիրի, Յոհ. Ֆոն Լերսի, Կ. Ռոթի, Պ. Ռոհրբախի, Յոհ. Ստրոբիգովսկու, Սաքսոնիայի դուքս պրոֆ. Ֆոն Մաքսի, Ա. Աբեղյանի, Ռ. Շեֆերի և Գ. Կլինգեի կողմից<sup>8</sup>։ Ընդ որում, եթե առաջինը ինդիրը քննարկում էր պատմաբանասիրական տեսանկյունից և ըստ արժանվույն գնահատելով «Գերմանացիների հետ լեզվով, հավատով և մշակույթով ցեղակից հայ ժողովրդի», «հնչյունների վերարտադրության հարազատության» «եվրոպական ժողովուրդների մեծ մասի գրեթե անբացառելի մեծապես գերազանցող» այբուբենն, ինչպես և V դ. ի վեր ստեղծված «բովանգակային որակով ու լեզվաոճական արտահայտչաձևերի կատարելությունը» աչքի ընկնող պատմագրությունը՝ այն համոզումն էր արտահայտում, որ հայերն արևելյան մյուս ժողովուրդներից շատ ավելի վաղ և շատ ավելի ընդգրկուն կապեր են ստեղծել «ժամանակակից արևմտյան գիտություն և կրթության հետ», ապա է. Շթիրը քննություն էր ենթարկում գերմանա-հայկական մշակութային փոխանցությունները։ Յոհ. Ստրոբիգովսկին իր հոդվածում պարզաբանում էր հայկական ճարտարապետության առանձնահատկությունները՝ վկայակոչելով իր «Հայկական կառուցողական արվեստը և եվրոպան» դիրքը, իսկ դուքս Ֆոն Մաքսը՝ հայ եկեղեցու բնորոշ կողմերն ու «հայկական բարեպաշտությունը»։ Ա. Աբեղյանը անդրադառնում էր հայ ժողովրդական բանահյուսությանը՝ լուսաբանելով այնտեղ ի հայտ եկող արևմտյան մշակութային տարրերը։ Կ. Ռոթը և Գ. Կլինգեն Ազգերի գաղթի տեսության դիրքերից պարզաբանում են էին կատարում հայ մարդու «հոգեկան կերտվածքի յուրահատկությունների» վերաբերյալ։ Հայերի արիական պատկանելությունը կասկածից դուրս էր համարում նաև Յոհ. Ֆոն Լերսը՝ վկայակոչելով Գյունտերի «Ռասաների հետազոտությունը» և Յոհ. Լեփսիուսի «Հայ ժողովրդի մահուղին» գրքում տեղ գտած մի շարք նկարագրություններ։ Իսկ Ռ. Շեֆերն իր հոդվածում լուսաբանում էր հայ ժողովրդի «անփոխարինելի նշանակությունը» Առաջավոր Ասիայի մշակութային վերելքի հարցում և ըստ այդմ կոչ էր անում արևմտյան քրիստոնեության այդ «արժեքավոր դաշնակցին» ապահովագրել Արևելքից սպառնացող բոլշևիզմի դեմ պայքարի համար<sup>9</sup>։

Հայերի պատկանելությունն արիական ռասային անվիճելի էր համարում նաև դր. Պ. Ռոհրբախը՝ այն կասկածի ենթարկող տեսակետները անվանելով անհեթեթ և «ավելորդ»։ «Եթե հայերը չպետք է արին լինեն, — հայտարարում էր նա իր հոդվածում, — ապա, միայն որպես օրինակ նշելու

29-ին նախարարի հանձնակատարի միջոցով տեղի է ունեցել հրամանագրի պաշտոնական հրապարակումը։ Տե՛ս «Armeniertum und Ariertum». Potsdam, 1934, S. 42.

<sup>8</sup> Նույն տեղում։

<sup>9</sup> Նույն տեղում։



Համար անհրաժեշտ է ասել, որ չպետք է լինեն նաև իտալացիները»<sup>10</sup>: Աշխատությունը, որի եզրափակիչ մասում տեղ էին գտել բազմաթիվ քաղվածքներ նաև Յոզ. Մարկվարտի, Յոհ. Լեփսիուսի, Հ. Հյուբերմանի, Ֆ. Ն. Ֆինկի, Ֆ. Նանսենի, Մ. Վազների և այլ ուսումնասիրողների ու հայագետների հետազոտություններից,<sup>11</sup> դարձավ Հայ ժողովրդի գերմանացի բարեկամների այդ զորեղ համագործակցության պսակը, որը Հայության համար նացիոնալ-սոցիալիզմի տարիներին ունեցավ անգերադնահատելի քաղաքական նշանակություն, և որի դիտական ու պատմամշակութային արժանիքներն իրենց արգիականությունը այսօր էլ չեն կորցրել:

Ինչևէ, 1930-ական թվականների սկզբին ծայր առած համաշխարհային տնտեսական ճգնաժամը և իսորացող գործազրկությունը Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ից մեծագույն ջանքեր էին պահանջում օգնության աշխատանքները շարունակելու և միաժամանակ միսիոներական ընկերություններին «Ազգային ունեցվածքի վատնման» մեջ մեղադրող նացիոնալ-սոցիալիստական պետական հովանավորչությամբ ի հայտ եկած նոր թշնամական մտայնություններին զիմակայելու համար: Միսիոներական ընկերությունների վարկաբեկման այդ քարոզարշավը սլարբերաբար ամրապնդվում էր նաև «գործով»: 1932 թ. ի հայտ եկան բարեգործական հանգանակությունների առաջին օրենսդրական սահմանափակումները, իսկ 1933 թ. սեպտեմբերի 29-ին բարեգործական օգնությունների կանոնավորման պրոլետական պետական կոմիսարի հրամանագրով այն հանգանակությունները, որոնք «չէին ծառայում գերմանացի ժողովրդի ձեռնարկին օգնության գործին», արգելվեցին<sup>12</sup>: Չնայած որոշումը հոկտեմբերի 24-ին դարձյալ չեղյալ հայտարարվեց<sup>13</sup>, սակայն շուտով ի հայտ եկան նոր հրամանագրեր ևս, որոնցով վավերացված սահմանափակումները գրեթե համանշանակ էին վերոնշյալ արգելքին: Մասնավորապես 1934 թ. հուլիսի 3-ին հրապարակված օրենքով արգելվում էին տներում, փողոցներում, հրապարակներում և այլ հասարակական վայրերում կատարվող հանդանակությունները, բացառությամբ եկեղեցում, կրոնական միջոցառումների ժամանակ իրագործվողներից<sup>14</sup>: Այգալիսով ընկերությունները զրկվում էին իրենց եկամտի հիմնական աղբյուրներից՝ հարկադրվելով ապավինել եկեղեցական սրահներում գանձվող անդամավճարներին և կամավոր նվիրատվություններին:

Այդ սպառնալից իրավիճակում արդյունավետ համագործակցելու և հարկ եղած դեպքում առավել միասնարար հանգես գալու նպատակով 1933 թ. հոկտեմբերին Առաջավոր Ասիայի երկրներում գործող գերմանա-

10 Նույն տեղում: Խոհրեպին այդ համեմատությունը կատարում էր՝ նկատի ունենալով Հայերի սեահերություն հանգամանքը:

11 Նույն տեղում, էջ 44-48: Գրքի հրատարակումից հետո Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ն իր պարբերականներում հանգես էր գալիս գրախոսականներով և ծանուցումներով՝ ձգտելով աշխատությունը տալ ըստ հնարավորին մեծ հրապարակային հնչեղություն: P. F l e i s c h m a n n. Neues von der deutsch-armenischen Gesellschaft. - DO, 1934, S. 12; Literatur, zu beziehen durch die Missionshandlung. Potsdam, Roonstr. 13. - OB, 1934, S. 16; 1935, էջ 16:

12 Mitteilungen. - OB, 1933, S. 64.

13 Նույն տեղում:

14 R. S c h a f e r. Sammelverbot. - OB, 1934, S. 42.

կան բոլոր ավետարանական միսիոներական և բարեգործական ընկերութ-  
յունները, ներառյալ նաև Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ն, միավորվեցին մեկ ընդ-  
հանուր՝ «Քրիստոնեական գործ Արևելքում» կառույցում, որն ուներ բա-  
ցառապես ներկայացուցչական նշանակություն և գրանց իրավունքներն  
ամենևին չէր նվազեցնում<sup>15</sup>: Չնայած նոր կառույցի և մասնավորապես  
նրա կազմում գործող Միսիոներական ընկերությունների խորհրդի<sup>16</sup> օ-  
րենքի շրջանակներում թույլատրված մի շարք ինքնապաշտպանական ե-  
լույթներին և «Քրիստոսի վտանգված գործը» «չթուլացող սիրով և հավա-  
տարմությամբ» շարունակելու՝ հասարակութային ուզղված ուղերձնե-  
րին<sup>17</sup>, այնուամենայնիվ դրանք չէին կարող հակակշիռ գառնալ պետական  
քաղաքականության և շարունակ խստացվող սահմանափակումների դեմ:  
1934 թ. նոյմեբերի 6-ին հրապարակվեց մի նոր օրենք, որով արգելվում  
էին հանգանակությունների կազմակերպման բոլոր տեսակի կոչերը, իսկ  
ղրանց իրականացումը կախման մեջ էր դրվում տեղական իշխանություն-  
ների թույլտվությունից: Բացառություն էին կազմում միայն ժամեր-  
գութությունների և կրոնական այլ արարողությունների ընթացքում կազմա-  
կերպվող հանգանակությունները և բարեկամների կամավոր նվիրատվութ-  
յունները<sup>18</sup>: Այդ աննախադեպ սահմանափակումը պրոևսական Ն Գ նախա-  
րարի 1935 թ. մարտի 27-ի որոշմամբ որոշ չափով մեղմացվեց<sup>19</sup>, սակայն  
1937 թ. գարնանը ուժի մեջ մտավ մի նոր, հանգանակությունների կազմա-  
կերպումը միանգամայն կաթվածահար անող օրինագիծ, որով միսիոներա-  
կան և բարեգործական ընկերությունների գոյությունը լրջորեն հարցակա-  
նի տակ էր դրվում<sup>20</sup>: Ըստ այդ օրենքի, հանգանակությունները արգել-  
վում էին նաև եկեղեցական արարողությունների ժամանակ. բացառութ-  
յուն էին կազմում միայն «կանոնավոր» ժամերգությունները, որոնք, սա-  
կայն, կախման մեջ էին դրվում տեղական իշխանությունների թույլտ-  
վությունից<sup>21</sup>:

Ավելորդ է ասել, թե այդ որոշումներն ինչպիսի ծանր հետևանքներ ու-  
նեին Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի աշխատանքների համար: Դրանց հաճախակի  
հերթադաշտությունը հնարավորություն չէր ընձեռում բավարար չափով  
օգտվել նույնիսկ թույլատրվող փոքրաթիվ հնարավորություններից, քանի  
որ, չնայած դրանք կազմակերպության պարբերականներում ինչպես

15 Kundgebung des Deutschen Evangelischen Missionsrats, S. 35. Christliches Orient-  
Werk.– OB, 1933, S. 59.

16 Կառույցը բաղկացած էր երկու ճյուղերից, որոնցից մեկում ընդգրկվել էին բարե-  
գործական, իսկ մյուսում՝ միսիոներական ընկերությունները: Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ն միա-  
ցել էր երկրորդ խմբին:

17 Die Tagung der Deutschen Evangelischen Missionen in Barmen, S. 60. Kundgebung des  
Deutschen Evangelischen Missionsrats.– OB, 1934, S. 35. Ein Wort der Deutschen Evan-  
gelischen Mission zur gegenwertigen Stunde, S. 45–46.

18 Sammelverbot.– OB, 1934, S. 48; 1935, S. 3:

19 Missions-sammlungen, S. 28.

20 Ministerialerlaß über die Neuordnung des Kollektenwesens.– OB, 1937, S. 32.

21 Նույն տեղում:

Հարկն է լուսարանվում էին,<sup>22</sup> սակայն մշտապես փոփոխվող նորմերի սահմաններում աշխատանքի վերականգնումն անհամեմատ ավելի մեծ ժամանակ էր պահանջում: Մյուս կողմից մեծ թիվ էին կազմում նաև այդ փոփոխությունների վերաբերյալ բավարար իրազեկում չունեցող տեղական իշխանությունների կամայականությունները, որոնց պատճառով հաճախակի արգելվում և խոչընդոտվում էին նույնիսկ միանգամայն օրինական միջոցառումները<sup>23</sup>:

Ի լրումն վերոնշյալ արգելքների, 1934 թ. երկրորդ կեսից ի հայտ եկան նաև առաջին այսպես կոչված «Դեիզային սահմանափակումները», որոնցով միսիոներական կամ բարեգործական նպատակներով Գերմանիայից կանխիկ դրամի արտահանումը փաստացիորեն արգելվեց<sup>24</sup>: Դրանցով զբաղվելու համար Ավետարանական միսիոների խորհուրդը 1934 թ. սեպտեմբերին հիմնեց մի ներկայացուցչական մարմին կամ այլ կերպ ասած «Միսիոներական դեիզային հաճնաժողով», որը լիազորված էր բանակցություններ վարել իշխանությունների հետ, և չնայած կարողացավ հասնել այն բանին, որ խորհուրդին անդամակցող ընկերությունների համար որոշ հատկացումներ թույլատրվեն, սակայն դրանք չափազանց չնչին և անբավարար էին աշխատանքների շարունակման համար<sup>25</sup>: 1934 թ. հուլիսից դեկտեմբեր ընկած ժամանակահատվածի համար, օրինակ, Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ին կատարվեց միայն 1258, 56 մարկի մասհանում, այն դեպքում, երբ այդ ժամանակամիջոցում մասնաճյուղերում աշխատանքները շարունակելու համար ընկերությունն անհրաժեշտ էր նվազագույնը 25000 մարկի ներդրումներ կատարել<sup>26</sup>: Դեիզային որոշումները նույն խստություններ չարունակեցին գործել նաև հետագա տարիներին՝ վերոնշյալ մյուս արգելքների հետ ստեղծելով մի իրավիճակ, որի հաղթահարումը կատարելապես անհնար էր թվում, և հարկ է նշել, որ միայն Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի անսպառ նվիրումի, հավատի և հանդուգն վճռականության շնորհիվ էր, որ դրանք նրա հայ պաշտպանյալների համար ճակատագրական չդարձան:

Մինչև իսկ հիշյալ սահմանափակումների պայմաններում իր հայանվեր աշխատանքները շարունակելու համար, ընկերությունը մշտապես հարկադրված էր դիմակայել նորանոր թշնամական մարտահրավերների, որոնց հեղինակները երկրում շեշտակի վերելք ապրող նացիոնալ-սոցիալիստական գաղափարախոսության գիրքերից փորձում էին վիճարկել այդ աշխատանքների և նույնիսկ ընկերության գոյության անհրաժեշտությունը: Մասնավորապես 1934–1936 թթ. մի շարք լրատվամիջոցներում առանձնակի լայն շահարկում էր ստացել այն տեսակետը, թե անհրաժեշտ է արգելել «գերմանական քրտինքի դրոշներն» արտասահման ուղարկող այդ և մյուս կազմակերպությունների դործունեությունը, քանի որ դրանով

22 Sammelverbot.– OB, 1934, S. 48. Missionssammlungen.– OB, 1935, S. 28. Mitteilungen.– OB, 1936, S. 48. Ministerialerlaß über die Neuordnung des Kollektenwesens.– OB, 1937, S. 32. „Kollekten in „kirchlichen Versammlungsraumen“.– OB, 1938, S. 8.

23 R. S c h a f e r. Sammlungsschwierigkeiten.– OB, 1936, S. 4.

24 R. S c h a f e r. Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission.– OB, 1935, S. 10–11.

25 Նույն տեղում:

26 Նույն տեղում:



«Հայրենիքին» նյութական վնաս էր հասցվում<sup>27</sup>: Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ն վատթարագույն հետևանքներով հղի այդ մեղադրանքներին արժանի հակահարվածներ էր տալիս՝ ի ցույց հանելով դրանց սնանկութունն ու հետին միտումները: Պ. Ֆլայշմանն իր «Նրա գլխարկությունը դեռ վախճան չունի» հոդվածում, սուր սարկազմով էր անդրադառնում այդ քննադատներին՝ նրանց խորհուրդ տալով զբաղվել ծխախոտի կամ ալկոհոլի համար արտասահմանում կատարվող ներդրումներով, որոնք «հարյուրապատիկ և հազարապատիկ» անդամ ավելի մեծ լինելով հանդերձ՝ հասարակական մտահոգության առարկա չէին դառնում<sup>28</sup>: Ի հիմնավորումն դրա, իր մեկ այլ «Խոսք տնտեսավարներին», հրապարակման մեջ նա ներկայացնում էր ճշգրիտ վիճակագրական տվյալներ ալկոհոլի և ծխախոտի համար կատարվող ներդրումների վերաբերյալ՝ այդպիսով փաստացիորեն ջախջախելով իր քննադատների տնտեսավարական դեմագոգիան<sup>29</sup>:

Ջանազան, այդ թվում պետական քաղաքականությանը տուրք տվող որոշ եկեղեցական շրջանների կողմից քննադատություններ էին տեղում նաև Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի գործունեության «ոչ միսիոներական» նկարագրի վերաբերյալ, որը նրանց համար պատրվակ էր ծառայում ընկերությունների գոյության անհրաժեշտությունը վիճարկելու համար: Ուստի պատահական չէ, որ դա մշտապես մնում էր ընկերության մարտնչող հրապարակախոսության ամենաարդիական թեմաներից մեկը: Ինչպես նշում էր այդ առթիվ Պ. Ֆլայշմանն իր «40 տարվա միսիոներական աշխատանք Արևելքում» հոդվածում, հենց միայն այն փաստը, որ առանց ընկերության անջակցության «հարյուրավոր հայ երեխաներ կկործանվեին», բավական էր, որպեսզի արդարացիներ նրա գոյությունը<sup>30</sup>: Նախագահի համոզմամբ, այդ շատ ավելի մեծանշանակ և աստվածահաճո առաքելություն էր, քան այն ավանդական «միսիոներությունը», որի դիրքերից փորձում էին հանդես գալ իր քննադատները: Դրա լավագույն հիմնավորումը տալիս էր նաև Աստվածաշունչը: «Գլխարկ սամարացին մարդասպանների մեջ ընկածին չքարոզեց, այլ կապեց նրա վերքերը և տարավ ծածկի տակ, — գրում էր այդ առթիվ Պ. Ֆլայշմանը, — մեր միսիայի պատմությունը հենց այդ տեսանկյունից է շատ ուսանելի: Այն հիմնադրվեց որպես մահամեղական շրջաններում գործող միսիա և դարձավ բարեսիրական գործունեություն ղժբախտ հայ ժողովրդի համար ... Այդ մեր Լեփսիուսի միսիայի փառքն է, որ մենք տասնամյակներ շարունակ հայերի մեջ աշխատելով՝ երբեք չենք փորձել նրանցից որևէ մեկին օտարացնել իր ազգային եկեղեցուց...»<sup>31</sup>:

Ուժեղացող հրապարակային հարձակումների դեմ Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի ինքնապաշտպանական ելույթները հատկանշվում էին այդ ժամանակ նույնիսկ անթույլատրելի թվացող՝ հավատի, սիրո և փորձություններ-

27 Mitteilungen.— OB, 1934, S. 44. P. F l e i s c h m a n n. Seine Barmherzigkeit hat noch kein Ende.— OB, 1935, S. 1.

28 OB, 1935, S. 1.

29 Ein Wort an die „Sparsamen“.— OB, 1936, S. 4. Այդ «հաճույքների» համար կատարվող ներդրումներն, ըստ ներկայացված հաշվարկների, կազմում էին երկրի ողջ ազգային եկամտի շուրջ մեկ վեցերորդ մասը:

30 P. F l e i s c h m a n n. 40 Jahre Missionsarbeit im Orient.— OB, 1935, S. 33.

31 P. F l e i s c h m a n n. Gehet hin und lehret alle Volker!— OB, 1936, S. 25.

րի՝ լեփսիուսյան դպրոցն անցած Համարձակությամբ: «Հարց է առաջադրվել, թե արդյոք մեր և մեղ նման կաղմակերպությունները գոյության իրավունք ունեն, թե ոչ... Մենք այդ հանդիստ լսում ենք և զվարթ շարունակում մեր ճանապարհը: Մեր Յոհաննես Լեփսիուսն այն ժամանակ, 1895 թ., նմանապես քիչ է եկեղեցական իշխանություններից թույլտվություն խնդրել, երբ վտանգված Հայ քրիստոնյաների ճիչը Արևելքից Հասավ այստեղ, և Հարցը վերաբերում էր նրանց օգնելուն և փրկելուն: Նաև 20 տարի անց նա չանսաց պետական և եկեղեցական իշխանություններին, այլ պարզապես արեց՝ այն, ինչին իրեն համարում էր կոչված: Այդպես և մենք կշարունակենք անել այն, ինչին մեզ համարում ենք կոչված: Աստծո գործերում կա մի ատյան, որի առաջ կշռադատող, խորհրդածող բանականության բոլոր առարկությունները պետք է Համրանան...»<sup>32</sup>:

Այդ աներեր վճռականությունը Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ին չլքեց նաև Հետագայում, երբ նացիոնալ-սոցիալիստական պրոպագանդայով պայամանավորված գաղափարական Հեղաբեկումները և զուգահեռաբար նաև ընկերության Հայանվեր գործունեության դեմ ծավալվող քարոզարշավը աննախադեպ մեծ չափեր ընդունեցին. վերջինս մշտապես գործում էր աստվածաշնչյան անձնազոհության ելակետով՝ ուղենիշ ունենալով իր հիմնադրի և առաջնորդի դասական օրինակը, և սակայն անցնող յուրաքանչյուր ժամ հագեցած էր նաև երբևէ աշխատանքի վերջնական դադարեցման հարկադրանքի առաջ կանգնելու տագնապով: «Եկան օրեր և ժամեր, — գրում էր Պ. Ֆլայշմանը դեռ 1935 թ., — երբ մեզ կարող էր երկյուղը համակել, երբ մեզ թվում էր, թե բոլոր երկրային և սատանայական ուժերը միավորվել են մեր Տիրոջ՝ միսիայի սլատվիրանի դեմ, երբ մեզ առաքկայացել էր Հետևյալ Հարցը. դեռ որքա՞ն կկարողանանք դիմանալ... Սակայն, երբ ետ ենք նայում անցած ծանր տարվա վրա, շնորհակալության ջերմ գգացումն է մեր մեջ արթնանում: Նրա զթասրտությունը դեռ վախճան չունի: Կայա Պունարի մեր որբանոցը դեռ այնտեղ է ... Շարունակվում է նաև Հալսի մեր որբախնամ աշխատանքը...»<sup>33</sup>:

Ինչ վերաբերում էր «մթին» ապագային, ապա ընկերությունն այն շարունակ մտահայում էր նոր մարտահրավերներին մինչև վերջին շունչը դիմագրավելու վճռականությամբ և նահատակության պատրաստ «առաքյալի» Հանգստությամբ. «Ոչ ոք չդիտի, թե եկող տարին ինչ կրերի մեր ընկերությանը: ...Սակայն որքան էլ ծանր և լուրջ ժամանակ է մեզ սպասում, մեկ ճշմարտություն նորից ի Հայտ կգա. այն, որ մասնավորապես նահատակության ժամանակները Հիսուսի եկեղեցու համար իսկական օրհնության ժամանակներ էին: Թե արդյոք մենք իսկապես լրջորե՞ն ենք ընկալել Լուծերի երգի վերջին տունը՝ «Վերցրեք մեր մարմինը», պարզ կդառնա միայն այն ժամանակ, երբ Հավատի ամենաուժեղ փորձությանը կդիմանանք»<sup>34</sup>:

Ընկերությունն իր Հայանվեր գործունեության հրապարակային պաշտպանությունը Հետևողականորեն շարունակեց նաև Հաջորդ տարիներին:

32 P. F l e i s c h m a n n. 40 Jahre Missionsarbeit im Orient.— OB, 1935, S. 33—34.

33 P. F l e i s c h m a n n. Seine Barmherzigkeit hat noch kein Ende!.— OB, 1935, S. 1.

34 Նույն տեղում, էջ 1—2:



Այդ առումով, թերևս, առանձնակի հիշատակության է արժանի 1937 թ. Պ. Ֆլայշմանի հրատարակած «Ինչու» ենք մենք դեռ շարունակ հոգ տանում հայ որբերի համար» հոդվածը, որտեղ նա 10 առանձին կետերով փորձում էր տալ այդ հարցի սպառիչ պատասխանը:<sup>35</sup> Ընդ որում ուշագրավ է, որ հոդվածում բարոյագիտական և քրիստոնեական-աստվածաշնչյան հիմնավորումների կողքին առանձին կետով վկայակոչվում էր նաև հայերի «ոսասայական ցեղակցության» հանգամանքը, որից գերմանացի ժողովրդի համար, այսպես կոչված, «առանձնահատուկ պարտավորություններ էին ածանցվում»<sup>36</sup>: Այդ պարզաբանումներն ու հիմնավորումներն իրենց նորովի արտացոլումը գտան նաև 1938 թ. հրատարակված մի շարք այլ հոդվածներում<sup>37</sup>: Եվ այնուամենայնիվ անցնող յուրաքանչյուր տարվա հետ ավելի և ավելի ընդգծուն էին դառնում նաև նացիոնալ-սոցիալիստական գաղափարների հաղթարշավով և օգնության աշխատանքների առկախման «ադետալի» նախազգացմամբ սլայմանավորված՝ ահազանգի և տազնասլի շեշտադրումները, որոնց, սակայն, միշտ հաջորդում էր անվերապահ լավատեսությունը. «Արգյոք Աստծո՛ւ կամքն է, կարո՞ղ է Աստծո կամքը լինել, որ մենք մեր ձեռքը ետ քաշենք մեր սիրելի անհայր, անմայր և անհայրենիք երեխաներից, որոնք մեր շնորհիվ դրսում իրենց պաշտպանված են զոհում, դադարեցնենք մի գործ, որն այդքան զոհաբերություններ է պահանջել և շարունակ կարողացել է բոլոր զրկանքները հաղթահարել: Սակայն միշտ, երբ նման երկյուղ է ուզում մեզ պատել, հառնում է մեր աչքի առջև նա, որը մի ժամանակ փոթորկի ու ալիքների ճնշման տակ իր աչակերտներին ասել է. «Օ, դուք, թերահավատներդ, ինչու» եք այդքան վախկոտ»: ...Մենք շարունակելու ենք նրան ապավինել և երբեք չենք վհատվի»<sup>38</sup>:

Դր. Լեփուիսի ԳԱԱ-ն չընկրկեց ստեղծված իրավիճակից և թույլատրելի բոլոր՝ նույնիսկ ամենաչնչին հնարավորությունների օգտագործման և, որ առավել ուշագրավ է, օրենսդրական խոչընդոտների բավական հանդուգն ու հնարամիտ շրջանցումների գնով կարողացավ շարունակել իր հայանվեր աշխատանքը: Եթե, օրինակ, իշխանությունների կողմից բարեգործական և միսիոներական կազմակերպությունների հանդեպ տարբերակված մոտեցումներ էին դրսևորվում, ապա ընկերությունը ձգտում էր հանդես գալ առավել մեղմ սահմանափակումների ենթակա կարգավիճակով<sup>39</sup>: Մեկ այլ գեսլքում արգելքները շրջանցելու նսյատակով ընկերության բարեկամներին հրատարականորեն առաջարկվում էր նվիրատվությունները կատարել անդամավճարների անվան տակ: «Ամենագործնական ելքն այն կլինի, — նշված էր, օրինակ, 1934 թ-ի հուլիսի 3-ի արգելմանը վերաբերող պարզաբանման մեջ, — որ մեր բարեկամներն ընթացիկ ժամանակամիջոցում իրենց կանոնավոր նվիրատվություններն անվանանշեն որ-

35 P. Fleischmann. Warum wir uns immer der armenischen Waisen annehmen — OB, 1937, S. 23–24.

36 Նույն տեղում, էջ 23:

37 P. Fleischmann. Gott ist Liebe! — OB, 1938, S. 13; P. Fleischmann Durchhalten, S. 33.

38 P. Fleischmann. „Uns ist bange, aber wir verzagen nicht“ — OB, 1937, S. 29.

39 Missions Sammlungen sind erlaubt. — OB, 1934, S. 19.

պես անդամավճարներ, իսկ մենք նրանց բոլորին կկարողանանք ընդգրկել անդամների ցուցակում: Մեր առաջադրանքներն իրականացնել կարողանալու համար մեր ընդհանուր սերը և զոհաբերման պատրաստակամութունը պետք է այդ ձևը ստանան»<sup>40</sup>:

Մամուլի, շրջիկ զեկուցումների, ֆիլմերի և թուղթիկների միջոցով շարունակվեց նաև օգնության աշխատանքների պրոպագանդան<sup>41</sup>: Ընդ որում առանձնահատուկ սահմանափակում չունեցող՝ շրջիկ զեկուցումների հնարավորութուններից առավելագույնս օգտվելու նպատակով, բուն զեկուցողներից զատ, այդ գործին լծվեցին նաև կազմակերպության մյուս աշխատակիցները<sup>42</sup>: 1936 թ. պատրաստվեցին և շրջանառության մեջ դրվեցին «Կայա Պունար, հայկական հայրենիք օտարության մեջ» և «Հալեպ, հնագույն քրիստոնյա ժողովրդի փրկության նավահանդիստը» ֆիլմերը, որոնք մեծ հաջողություն ունեցան՝ նպաստելով բարեկամների շրջանի ընդլայնմանը<sup>43</sup>:

Նշված միջոցառումների շնորհիվ Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ն կարողացավ բարեկամների հետ իր կապը պահպանել և նրանց աջակցությամբ շարունակել օգնության աշխատանքները, եթե նույնիսկ դրա համար անհրաժեշտ էր դիմել մի շարք ծայրահեղ խնայողությունների: Ինչ վերաբերում էր դեֆիցային արգելքներին, ապա ընկերությանն այլ ելք չէր մնում, քան դրամը վերածել ապրանքի և կատարել ապրանքային առաքումներ, որոնց վերաբերյալ սահմանափակումներ չկային: Այդ դեպքում, անշուշտ, առաջանում էր լրացուցիչ ծախսերի անհրաժեշտություն, քանի որ նույնատեսակ ապրանքները Սիրիայում կարող էին ավելի մատչելի գներով ձեռք բերվել, քան Գերմանիայում, բացի այդ, որոշակի հատկացումներ պետք է կատարվեին նաև դրանց առաքման համար: Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ն, սակայն, իր հայ պաշտպանյալներին հասանելի դառնալու այլ հնարավորություն չունեցավ, և 1934 թ. մուտք գործող գումարները Հալեպ և Կայա Պունար էին առաքվում գերազանցապես ապրանքների տեսքով, որոնց տեսականին խիստ բազմազան էր<sup>44</sup>:

Ընկերությունը պարբերականներում 1933 թ. հետո հետևողականորեն շարունակեց նաև հայոց պատմության և մշակույթի լուսաբանումը՝ այն արժեքավորելով ոչ միայն երկու «ցեղակից ազգերի» մշակութային կապերի խորացման, այլև ստեղծված ծանր իրավիճակում օգնության աշխատանքներին հասարակական աջակցությունն առավելագույնս ապահովելու ա-

40 R. S c h a f e r. Sammelverbot, S. 42–43.

41 Unseren Freunden...– OB, 1937, S. 12. Gemeinde-Abende.– OB, 1936, S. 40. „Mitteilungen“.– OB, 1938, S. 36.

42 OB, 1938, S. 36.

43 Mitteilungen.– OB, 1936, S. 16. Հմտ. Gemeinde-Abende, S. 40. Հմտ. Aufführung der Kaja Punar-Filmsto-Bildserie in Radebeul.– OB, 1937, S. 32. Հիշատակված առաջին ֆիլմը բաղկացած էր 70, իսկ երկրորդը՝ 82 լուսանկարներից: Տե՛ս Gemeinde-Abende.– OB, 1936, S. 40. Ֆիլմերը, շրջիկ զեկուցումների ընթացքում օգտագործվելուց բացի, անհատույց առաքվում էին նաև ցանկացողներին:

44 Ուղարկվում էին հագուստներ, կտորեղեն, կենսամթերք, դեղորայք, գյուղատնտեսական գործիքներ, շարժական գույք և մնացյալ ամեն բան, ինչի կարիքը Հալեպի և Կայա Պունարի երեխաներն ունեին: R. S c h a f e r. Sammelverbot.– OB, 1934, S. 43. R. S c h a f e r. Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission.– OB, 1935, S. 11.

ուումով: Այդ առթիվ թերևս առանձին հիշատակման է արժանի Գոթհարդ Յաչկերի՝ 1934 թ. հոկտեմբերին լույս տեսած «Հիշողություններ Արթուր Լայսթի մասին» հոդվածը, որտեղ հեղինակը լուսաբանելով Հայ մշակույթի հետ Հայտնի գերմանացի հետազոտողի ունեցած երկարամյա փոխառնչությունները՝ ընթերցողին էր ներկայացնում նաև այն Հայ գրողների «աստեղաբույրը», որոնք եղել էին Ա. Լայսթի ստեղծագործական ոգորումների առանցքը<sup>45</sup>: Միաժամանակ թարգմանաբար գերմանացի ընթերցողին էին ներկայացվում նաև Հայ գրական և բանահյուսական ստեղծագործություններ<sup>46</sup>, ասույթներ և ասացվածքներ<sup>47</sup>, ներսես Շնորհալու<sup>48</sup>, Կոմիտաս կաթողիկոսի ստեղծագործությունները<sup>49</sup> և այլն:

Պարբերականներում միմյանց էին հաջորդում ընկերություն աշխատակիցների և բարեկամների կողմից հեղինակված բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնցից յուրաքանչյուրը նոր և ուրույն կողմերով էր լուսաբանում Հայոց պատմական անցյալը և մշակույթի նվաճումներն ու առանձնահատկությունները: Գ. Հեթցելն, օրինակ, իր «Հայերը և Աստվածաշունչը» հոդվածում պարզաբանում էր Հայաստանում քրիստոնեության ընդունման և Աստվածաշնչի Հայերեն թարգմանման պատմությունը՝ գուգահեռաբար ներկայացնելով «Հնագույն» քրիստոնյա ժողովրդի մանրանկարչություն ընտիր նմուշներ<sup>50</sup>: Իսկ նույն տարում հրատարակված իր մեկ այլ՝ «Անին՝ 1001 եկեղեցիների քաղաքը» ծավալուն հոդվածում նա ներկայացնում էր Հայաստանի X–XIV դդ. հերոսական պատմությունը և կատարում ուշագրավ պարզաբանումներ այդ շրջանի Հայ ճարտարապետական նվաճումների մասին<sup>51</sup>:

Հրատարակվում էին ուշագրավ հետազոտություններ նաև Հայ եկեղեցու անցած պատմական ուղու, նրա առանձնահատկությունների և Հայ ու եվրոպական եկեղեցիների փոխառնչությունների պատմության վերաբերյալ<sup>52</sup>: «Մենք այստեղ հաճախ ենք հանդիպում Հայ քրիստոնյաների, բայց հազվադեպ ենք հաղորդակից դառնում Հայկական քրիստոնեությանը, — նշում էր Պ. Ֆլայշմանն իր հոդվածներից մեկում, — և հենց այդ է, որին արժե մեծ ուշադրություն նվիրել: Քանի որ դա նախ և առաջ մի ժողովրդի քրիստոնեությունն է, որն իրավամբ համարվում է Հնագույն քրիստոնյա

45 G. J a s c h k e. Erinnerung an Arthur Leist.— DO, 1934, S. 108-109.

46 Aus den Liedern eines Einsamen, S. 138-140. Armenisches Lied.— OB, 1937, S. 24.

47 Aus der Spruchweisheit Bayezids.— DO, 1935, S. 65.

48 G. H e t z e l. Ani, die Stadt der 1001 Kirchen „bin bir kilissee“, S. 36.

49 Aus einem Hymnus des armenischen Katholikos Komitas.— DO, 1939, S. 78.

50 G. H e t z e l. Die Armenier und die Bibel.— OB, 1935, S. 27.

51 G. H e t z e l. Ani, die Stadt der 1001 Kirchen „bin bir kilissee“.— DO, 1935, S. 33-37. «...նախկինում այնքան հրաշագեղ այդ քաղաքը նստած է իր ավերակների վրա և ողբում է ու ողբում, — գրում էր Գ. Հեթցելն իր եզրափակիչ տողերում, — միթե՞ այստեղ ոչ ոք չկա, որ կարեկցի նրան և նրան արարող Հայ ժողովրդին: Ե՞րբ է Մասիսը Հայաստանն իր հովանու տակ պահող Արարատը, ուղարկելու իր ավետիսը. Անի՛, բավական է արտասվես... Ե՞րբ, այո, ե՞րբ»:

52 G. K l i n g e. Die armenische Kirche in ihrem Verhältnis zu den europäischen Kirchen. S. 6-12; „Zum armenischen Bibeljubiläum“, S. 86-89; P. F l e i s c h m a n n. Armenisches Kirchentum.— DO, 1937, s. 57-60; H. W i t z e m a n n. Das heilige Öl der gregorianischen Kirche, S. 38-40; P. F l e i s c h m a n n. Vom armenischen Christentum.— OB, 1937, S. 17-18; A. L o e b n e r. Die armenische Kirche in Ostgalizien.— DO, 1938, S. 45-51.



ժողովուրդը: Եվ բացի այդ դա մի քրիստոնեություն է, որ ամենասերտ կերպով միահյուսված է ազգայնության հետ, այնպես որ գոնե մինչև այժմ մեկն առանց մյուսի հնարավոր չի եղել պատկերացնել: Վերջապես, ինչպես Արևելքի մյուս եկեղեցիները, և հավանաբար շատ ավելի մեծ չափով, քան նրանք, այն իր ժամերգությունում և կառավարման ոլորտում կրում է հնագույն, մասամբ չափազանց արժեքավոր գանձեր, որոնք անհրաժեշտ են առաջին հարյուրամյակների քրիստոնեությունն ընկալելու համար»<sup>53</sup>:

Բնականաբար անաչառ դնահատման էին ենթարկվում նաև համաշխարհային քրիստոնեության համար հայ եկեղեցու ունեցած պատմական դերն ու նշանակությունը: «Հայ եկեղեցին հռոմեական կաթոլիկ եկեղեցու հետ բառի բուն իմաստով գտնվում է մոր և մանկան փոխհարաբերության մեջ, — նշվում էր վերոնշյալ հոգվածում, — երեխան կարող է մտավորապես մորը վաղուց դերազանցած լինել, կարող է մոր տեսակետներից և սովորույթներից գժոհ՜ լինել, սակայն մայրը մնում է մայր...»<sup>54</sup>:

Ընկերության հրապարակախոսության կիզակետում էր շարունակում մնալ նաև հայ ժողովրդի մեծագույն ողբերգությունը՝ Մեծ Եղեռնը, որն իր զարհուրելի մանրամասներով վերստին առարկայացավ Կ. Յեպեի որդեգրի՝ Մ. Մելքոնյանի կողմից հեղինակված վկայություններում: Նրա և նրա բախտակիցների զրկանքներն ու Կ. Յեպեի փրկարար առաքելությունը վերապատմող՝ ընդարձակ հուշապատում-հոգվածաշարի հրապարակումը, սկսվեց 1936 թ. ապրիլին, ավարտվեց միայն 1938 թ. մարտին՝ երկու տարի շարունակ ընթերցողին իրազեկում տալով անհատույց մնացած այդ ոճրագործության բնույթի, ընթացքի և հետևանքների մասին<sup>55</sup>: Ի լրումն դրա, ընկերության «Der Orient» պարբերականում 1938 թ. ամբողջությամբ հրատարակվեց էնվերի՝ 1915 թ. մայիսի 27-ի հրամանը հայերի աքսորի իրականացման հարցում զինվորական ուժերի աջակցությունն ապահովելու վերաբերյալ<sup>56</sup>: Լույս էին տեսնում այլ նյութեր ևս՝ իրենց հերթին նպաստելով թեմայի ամբողջացմանը<sup>57</sup>: Չի կարելի, իհարկե, չնշել, որ պատմական թեմատիկան մշտապես ուղեկցվում էր Հայաստանի և սփյուռքահայության արգի հոգևոր-մշակութային կյանքում տեղի ունեցող կարևոր իրադարձությունները լուսաբանող տեղեկատվությամբ<sup>58</sup>:

Ինչևէ, հայ ժողովրդի պատմամշակութային արժեքների հետևողական լուսաբանումը որոշակիորեն գարձավ 1933–1938 թթ. բազում մարտահրավերների դեմ Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի կողմից ծավալվող համալիր կազմա-

53 P. F l e i s c h m a n n. Armenisches Kirchentum.— DO, 1937, S. 57.

54 Նույն տեղում:

55 M. M e l k o n i a n. Karen Jeppes schwerste Zeit.— OB, 1936, S. 15-16, 26-27, 30-31, 47-48.— OB, 1937, S. 11, 13-14, 26-27, 37-38.— OB, 1938, S. 10.

56 Das Armeniergesetz vom 27. Mai 1915.— DO, 1938, S. 58-59.

57 I. M. S i c k. Avedis und Nisjan.— OB, 1937, S. 32; Aus Mission und Kirche.— OB, 1939, S. 7.

58 Armenien.— DO, 1934, S. 46; Armenien.— DO, 1935, S. 93; Syrien.— DO, 1936, S. 93; H. W e i d h a a s. Armenier in Polen.— DO, 1937, S. 15-16; Armenien, S. 19; Armenien.— DO, 1938, S. 23; A. L o e b n e r. Schließung des Klosters Etschmiadsin?, S. 82-83; G. S c h n e i d e r. Aus dem heutigen Leben der armenischen Kirche — OB, 1939, S. 18-19; 22-23.

կերպական և գաղափարական պայքարի անքակտելի մասը՝ վերոհիշյալ մյուս համալիր միջոցառումների հետ միասին ընկերութանը հնարավորութիւն ընձեռելով շարունակել իր փրկարար առաքելութիւնն ու պահպանել մասնաճյուղերը: Ստորև պատկերված առաջին աղյուսակում ներկայացնում ենք ընկերութան՝ 1934–1938 թթ. եկամուտների և ծախսերի հիմնական վիճակագրական տվյալները, իսկ երկրորդում մասնաճյուղերին կատարված ապրանքային հատկացումների չափերը (արտահայտված գերմ. մարկով)<sup>59</sup>:

Տարեթիվ	Մուտք		Ելք						
	Ընդհանուր	Այդ թվում պակասորդ	Հալեպի որբախնամ աշխատանքների համար	Կայա Պունարի որբախնամ աշխատանքների համար	Կառավարման ծախսեր	Պրոպագանդաներ, պարբերականներ, ֆիլմեր, շրջիկ դեկորումներ և այլն)	Կենսաթոշակներ և կենսաթոշակային ասպահնավազումներ	Այլ ծախսեր (ուսումնական և այլն)	Նախորդ տարվա պակասորդի հատուցում
1934	101352,11	3920,92	21541,53	31203,94	19804,48	8165,72	5030,95	7644,70	7960,79
1935	97227,23	4820,73	23028,14	36926,57	19852,96	1184,05	3190	9124,59	3920,92
1936	107405,71	5655,21	26933,29	37558,97	20292,95	12081,03	3240	2478,74	4820,73
1937	93153,94	–	12922,70	25325,90	17260,19	7871,51	3240	20878,42	5655,21
1938	82120,51	–	10753,76	23392,94	19099,38	9796,46	3300	15777,97	–

Տարեթիվ	Ելք						Կայա Պունար և Հալեպ առաքված ապրանքների ընդհանուր քաշը
	Կայա Պունար			Հալեպ			
	Ընդհանուր գումարայինը	Այդ թվում ապրանքի տեսքով	Ապրանքային առաքումների քաշը	Ընդհանուր գումարայինը	Այդ թվում ապրանքի տեսքով	Ապրանքային առաքումների քաշը	
1934	31203,94	1656	Ձի Հաղորդվում	21541,53	5297	Ձի Հաղորդվում	9908 կգ
1935	36926,57	15584,19	Ձի Հաղորդվում	23028,14	9558,79	Ձի Հաղորդվում	48767 կգ
1936	37558,97	14240,91	34051 կգ	26933,29	12548,96	6033 կգ	40084 կգ
1937	25325,90	8685,74	16767 կգ	12922,70	8822,87	3135,06 կգ	19902,06 կգ
1938	23392,94	7987,60	27938 կգ	10753,76	9227,76	4854 կգ	37165,76 կգ

Այդ մեծածավալ առաքումների շնորհիվ ընկերութան համապարփակ հայանվեր աշխատանքները Հալեպում և Կայա Պունարում անընդմեջ շա-

59 Տե՛ս ՕԲ ամսագրի համապատասխան տարեգրքերում ներկայացված ընկերութան տարեկան հաշվետվությունները:

րունակվեցին մինչև 1939 թ.<sup>60</sup>: Իսկ երբ սկսվեց Երկրորդ Համաշխարհային պատերազմը, որով Սիրիան, որպես Ֆրանսիական մանդատային տա-

60 1933 թ. մինչև Երկրորդ աշխարհամարտը ընկերության միջոցներով Կայա Պունարում Համալիր խնամքի տակ էին գտնվում մոտ 100 որբ երեխաներ: Նրանց Համար գոյություն կայուն պայմաններ ստեղծելու և, բացի այդ, Հաստատությանը Գերմանիայի տնտեսաքաղաքական նոր ցնցումներից հնարավորինս ապահովագրելու նպատակով այնտեղ մեծ թափ Հաղորդվեց երկրագործության զարգացմանը: Ապրանքային առաքումների ազատությունն այդ թույլատրում էր, և 1934–1938 թթ. Կայա Պունարում Հատկանշվում էին իբրև տեխնիկական սպառազինման և գյուղատնտեսության տեղագրի զարգացման տարիներ: A. K a v o u k d j i a n. Aus Kaja Punar.– OB, 1935, S. 25-26. Landwirtschaftlicher Bericht aus Kaja Punar für März u. April 1936.– OB, 1936, S. 28. A. K a v o u k d j i a n. Allerlei Besuch und Weihnachten in Kaja Punar.– OB, 1938, S. 9. P. G. D e m n i z. Ein Bericht von unserem landwirtschaftlichen Betrieb in Kaja Punar.– OB, 1939, S. 4. Միևնույն ժամանակամիջոցում ընկերության միջոցներով Հայեպում խնամվում էին ավելի քան 200 երեխաներ, որոնց մեծ մասը գտնվում էր Համալիր խնամքի ներքո, իսկ մյուսներն օրական մեկ անգամ լիարժեք կերակուր էին ստանում: 1935–1936 թթ., օրինակ, նրանց թվական հարաբերակցությունը Համապատասխանաբար կազմում էր 122/95 և 118/90. R. S c h a f e r. Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission.– OB, 1936, S. 18. P. F l e i s c h m a n n. Jahresbericht 1936 der Dr. Lepsius Deutschen Orient-Mission.– OB, 1937, S. 18. Այդ հարաբերակցությունը չնչին փոփոխություններով պահպանվեց նաև Հաջորդ տարիներին: S b ' u L. G a s z c z y k. Weitere Bilder aus unserer Arbeit in Aleppo.– OB, 1939, S. 21. Հատկանշական է, որ չնայած Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի Համար ստեղծված աննախադեպ ծանր իրադրությունը, Հայեպի օգնության աշխատանքներն այդ տարիներին ևս միայն նշված ոլորտներով չսահմանափակվեցին: Համաշխարհային տնտեսական ճգնաժամի և ուժեղացող գործազրկության ու թանկացումների հետևանքով 1930-ական թվականներին երկրորդ կեսին ծայրաստիճան սպառնալից իրադրություն ստեղծվեց նաև Հայաստանի ավելի քան 10 000 ճամբարաբնակ Հայերի Համար: Դեռ 1935–1936 թթ. ձմռանը ճամբարում արձանագրվեց Հիվանդությունների կտրուկ աճ (մոտ 30 տոկոսով), որի հիմնական պատճառը խրոնիկական թերասնումն էր: L. G a s z c z y k. Notruf aus Aleppo!– OB, 1936, S. 17. Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ն գործի դրեց իր բոլոր Հնարավորությունները՝ ճամբարականներին օգնելու նպատակով միջոցներ հայթայթելու Համար, պարբերականը Հեղձված էր օգնության կոչերով և Հայեպից ստացված ահազանգերով: L. G a s z c z y k. Notruf aus Aleppo! S. 17-18. L. G a s z c z y k. Bescher uns, Herr, das tagliche Brot.– OB, 1937, S. 11. «Հայեպում սննդամթերքի և Հազուստի են սպասում ոչ միայն մեր խնամքին վստահված մի քանի Հարյուր երեխաները,– նշված էր ընկերության 1936 թ. սկզբին հրապարակված տեղեկություններից մեկում,– այլև դժբախտ ալիքների, հիվանդների և մեր խնամքի տակ չգտնվող երեխաների մի մեծ զանգված, որոնք այս ձմեռ կանգնելու են անասելի զրկանքների առջև, եթե մենք, ինչպես նախորդ տարիներին, չդիմենք այնտեղ, ուր մեզ կանչում է թշվառության ձայնը: ... Մենք սրտագին խնդրում ենք մեզ այդ նպատակի Համար նվիրատվություններ կատարել...» (In letzter Stunde!– OB, 1936, S. 37): Հրապարակումները լայն արձագանք գտան ընկերության բարեկամների շրջանում, որոնց կողմից կատարված Հատկացումները դանիացի, շվեյցարացի և ամերիկացի բարեկամների ներդրումների հետ միասին Հնարավորություն ընձեռեցին ճամբարականներին մեծաքանակ օգնություն ցուցաբերել: S b ' u G. H e t z e l. Hall und Widerhall...– OB, S. 24. Այն միաժամանակ մեկնարկվեց երկու՝ սննդամատակարարման և բուժսպասարկման բնագավառներում: Ըստ այդմ տարեսկզբին այնտեղ հիմնվեց մի խոհանոց, որտեղ Հունվարի 17-ից մինչև ապրիլ ամիսը օրական մեկ անգամ տաք և սննդարար կերակուր էր բաժանվում ամենածանր վիճակում գտնվող մարդկանց: L. G a s z c z y k. Notruf aus Aleppo! S. 17. Հմտ. L. G a s z c z y k. Bilder aus unserer Arbeit in Aleppo.– OB, 1938, S. 6. Ընդ որում, եթե սկզբում նրանց թիվը 150-ից չէր անցնում, ապա Հաշվված օրերի ընթացքում այն բազմապատկվեց մարտին՝ հատելով 750-ի սահմանագիծը: L. G a s z c z y k. Notruf aus Aleppo!– OB, 1936, S. 17. Սննդարար ճաշի հետ նրանք ամեն օր ստանում էին նաև 300 գրամ հաց: Խոհանոցը կանոնավոր կերպով գործեց նաև Հաջորդ երեք տարիների ձմեռային ամիսներին՝ զգալիորեն մեղմելով ճամբարականների դրությունն ու կանխելով թերասնումն պայմանավորված հիվանդությունների հետագա զարգացումը: L. G a s z c z y k. Bescher uns, Herr, das tagliche Brot.– OB, 1937, S. 12. E. M i n k n e r. Von unserer Zusammenarbeit mit den Danen in den Flüchtlingslagern Aleppos.– OB, 1938, S. 47. L. G a s z c z y k. Weitere Bilder aus unserer Arbeit in Aleppo.– OB, 1939,



րածք, Գերմանիայի համար դարձավ թշնամական երկիր, գերմանական ընկերությունների, այդ թվում նաև Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի հետագա գործունեությունն այնտեղ այլևս անհնար դարձավ: Ամբողջովին խզվեց նաև ընկերություն կապը մասնաճյուղերի հետ, որոնք հայտնվելով կատարյալ մեկուսացման մեջ՝ կարճ ժամանակ անց հարկադրված եղան լուծարվել<sup>61</sup>:

S. 22. Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի և դանիացի բարեկամների նյութական աջակցությամբ առաջընթաց արձանագրվեց նաև բուժսպասարկման բնագավառում: 1936-ին ճամբարում անհատուկ սպասարկվեցին 462, 1937-ին՝ 853, իսկ 1938-ին ոչ պակաս, քան 1692 հիվանդներ, որոնք բոլորն էլ, չնչին բացառություններով, կարողացան բուժվել և ապաքինվել: *S' u L. G a s z c z u y k. Bilder aus unserer Arbeit in Aleppo.*— OB, 1938, S. 5; 1939, S. 17-18. Դա հնարավոր դարձավ ոչ միայն նպատակային բուժման, այլև տևական հոգատար խնամքի շնորհիվ, որ անհրաժեշտ էր ծանր հիվանդների վերջնական ապաքինման և կազդուրման համար: «Համատեղ ուժերով մեղ հաջողվեց ամենածանր հիվանդներին այնքան երկար պահել խնամքի տակ, մինչև նրանք աշխատունակ դարձան և դարձյալ կարողացան իրենց ընտանիքների համար հոգ տանել,— նշում էր ընկերության չափավոր աշխատակից Լ. Գազչուկը իր 1938 թ. հաշվետվության մեջ,— այն փորձը, որ մենք կուտակել ենք բազմաթիվ տարիների ընթացքում, մեզ հնարավորություն է տալիս սովորել հիվանդությունների և զրկանքների դեմ պայքարում»: «Մենք ղեկորայքի համար հիմնականում պարտական ենք Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ին,— նշում էր նա 1939 թ.,— որը մեզ արդեն տարիներ ի վեր մատակարարում է տարբեր ֆիրմաների կողմից պատրաստված գերազանց գեղանյութեր...»: Ինչ վերաբերում էր մասնաճյուղերին կատարվող ապրանքային առաքումներին, այսպե՛ս գրանք, բնականաբար, միայն ղեկորայքով չէին սահմանափակվում և նույնքան բազմազան էին, որքան ընկերության հայ պաշտպանայինների կառիքներն էին: *P. F l e i s c h m a n n. Seine Barmherzigkeit hat noch kein Ende. Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission fur 1938,* S. 14. *A. K a - v o u k d j i a n. Ein Rückblick mit Dank.*— OB, 1935, S. 9. *R. S c h a f e r. Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission.*— OB, 1936, S. 19. *P. F l e i s c h m a n n. Jahresbericht 1936 der Dr. Lepsius Deutschen Orient-Mission.*— OB, 1937, S. 18. *P. F l e i s c h m a n n. Jahresbericht fur 1937 der Dr. Lepsius Deutschen Orient-Mission.*— OB, 1938, S. 17. *P. F l e i s c h m a n n. Seine Barmherzigkeit hat noch kein Ende. Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission fur 1938.*— OB, 1939, S. 14.

61 Հարկ է նշել, որ Կայա Պունարի որբանոցը հարկադրված եղավ դեռ 1939 թ. հուլիսի սկզբին այնտեղից հեռանալ: Քեմալական Թուրքիան Սիրիայի՝ Ալեքսանդրետի սանջակի սեփականացումը դեռ 1936 թ. համարում էր իր արտաքին քաղաքականության առաջնա-գույն խնդիրներից մեկը. մի խնդիր, որ Քեմալի կառավարության պնդմամբ, շարունակ բանակցությունների առարկա էր դառնում Թուրքիայի և Սիրիայի մանդատային երկրի Ֆրանսիայի միջև: *H. M u l l e r. Orient-Missions-Freizeit in Potsdam, „Mitteilungen an unsere Mitglieder und Freunde!*“, 1940, S. 33. Ի վերջո, Փարիզը զիջեց՝ 1938 թ. համաձայնելով սանջակի պառլամենտի պատգամավորական տեղերի կեսից ավելին հատկացնել Թուրքե-րին: Այնուհետև այն հուշակվեց որպես Հաթայ անունով մի նորանկախ պետություն, որը ևս մի քանի ամիս անց, 1939 թ. դարձանը, միացվեց Թուրքիայի (նույն տեղում, էջ 33-34): Այդ տարածքային «առևտրից» հետո որբանոցի երեխաները և անձնակազմը տեղափոխ-վեցին Քեսաբ, որից հետո, սակայն, հաստատությունը հարկադրված եղավ լուծարվել: Եթե, այնուհանդերձ, Կայա Պունարի աշխատակիցներին (այնտեղ գործում էին Ա. Կավուք-չյանը, Գ. Շնայդերը և Դեմնից ամուսինները) հաջողվեց ծանր զրկանքների գնով վերադառնալ Գերմանիա, ապա պատերազմի բռնկումից հետո Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ն այլևս չափավոր իր աշխատակիցների հետ (օր. Կարեն Յեպեի մահից հետո չափավոր մասնա-ճյուղի աշխատանքները ղեկավարում էին Լ. Գազչուկը, նրա քույրը՝ Յ. Պատրիցին և դանիուհի օր. Յ. Յենսենը) այլևս կապ հաստատելու և մասնաճյուղի ճակատագրի վերա-բերյալ տեղեկություններ քաղելու հնարավորություն չունեցավ: Հայտնի է միայն, որ այն-տեղ ղեկորայքի վերջին առաքումն այնքան առատ էր եղել, որ, ինչպես նշվում էր Լ. Գազչուկի կողմից ուղարկված վերջին տեղեկություններից մեկում, հնարավորություն էր ընձեռել երեխաների և ունեզուրկ հայ բնակչության բուժսպասարկումն անընդմեջ շարու-նակել նաև 1939-1940 թթ. ձմռան ընթացքում: *Von unseren Stationen, „Mitteilungen an unsere Mitglieder und Freunde!*“, 1940, S. 6. Եթե այնուամենայնիվ այնտեղ հնարավոր է եղել աշխատանքներն առժամանակ շարունակել, ապա անկասկած միայն հաշվված ամիսներ, քանի որ Գերմանիայի կողմից Դանիայի գավթումից հետո (Դանիան Գերմանիայի կողմից նվաճվել է 1940 թ. ապրիլի 9-ին: Տես Հայկական սովետական հանրագիտարան. Հ. Յ. Երևան, 1977, էջ 277) մասնաճյուղը պետք է զրկվեր նաև դանիացի բարեկամների աջակ-ցությունից: Ամեն դեպքում այդ մասին ևս հետագայում որևէ տեղեկություն չհաղորդվեց:

Հակառակ անելանելի իրադրություններ, Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի վճռակա-  
նությունը չսասանվեց նույնիսկ պատերազմի բռնկումից և մասնաճյուղե-  
րի հետ հաղորդակցություն հարկագիր խղումից հետո: «Մենք այլևս ոչինչ  
չենք կարող դուրս ուղարկել, ոչ փող, ոչ ապրանքներ,— գրում էր Պ.  
Ֆլայշմանը 1939 թ. հոկտեմբերին,— ... Մեղնից ոչ ոք չգիտի, թե ինչ կրե-  
րեն գալիք օրերն ու շաբաթները: Մենք գիտենք, սակայն, մի բան. մենք  
ներանցից չենք, ովքեր նահանջում են: Դարձյալ անհայրենիք գարձած ե-  
րեխաների համար կատարվող բարեսիրական գործը մեզ համար մնում է  
որպես թանկագին կտակ: Արդյոք շուտով հնարավոր կդառնա՞ դուրս հետ  
կապը վերականգնել, արդյոք հայ ժողովրդի ոչ գերմանացի բարեկամնե-  
րին կհաջողվի՞՞ Սիրիայում գտնվող մեր երեխաներին և նրանց խնամողնե-  
րին մոտ ժամանակահատվածում օղնել... Այդ և դրա հետ կապված շատ  
այլ հարցեր մեզ անհայտ են, սակայն «Մենք չենք վախենում, եթե նույ-  
նիսկ աշխարհը կործանվի, և լեռները սուզվեն ծովի մեջ...»<sup>62</sup>:

Ստեղծված իրավիճակում, բնականաբար, Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի հիմ-  
նական խնդիրը պետք է դառնար բարեկամների հետ կապի պահպանումն  
իրևև ապագայում օգնության աշխատանքների վերսկսման հիմնական նա-  
խադրյալ: Ուստի պատահական չէ, որ ընկերության քարոզչական գործու-  
նեությունը բոլոր հնարավոր միջոցներով շարունակվեց: 1939 թ. կազմա-  
կերպվեցին բազմաթիվ շրջիկ զեկուցումներ, որոնցում մեծ ներդրում ունե-  
ցան Հ. Մյուլլերը, է. Մինկները և Գ. Շնայդերը<sup>63</sup>: Տարվա ընթացքում  
ներանց կողմից սպասարկվեցին շուրջ 130 համայնքներ, և բացի այդ վա-  
ճառվեց նաև մեծաքանակ՝ 530 մարկ արժողություն գրականություն<sup>64</sup>: Հա-  
սարակալություն հետ ամենամսյա հանդիպումներ էին կազմակերպվում  
նաև ընկերության գրասենյակում, որտեղ զեկուցումներով հանդես էին  
դալիս Պ. Ֆլայշմանը, Գ. Շնայդերը, պաստոր Կյուհնը և այլ աշխատակից-  
ներ ու բարեկամներ<sup>65</sup>:

Իրադրությունը, սակայն, շարունակ ավելի աննպաստ էր դառնում նաև  
քարոզչության համար: 1939 թ. աշնանը երևան եկան թղթի օգտագործ-  
ման առաջին պետական սահմանափակումները, որոնցով փաստացիորեն  
անհնար գարձավ թե՛ Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի և թե՛ մյուս ընկերություն-  
ների պարբերականների հետագա գոյությունը: Մայր առավ քույր ամ-  
սագրերի և թերթերի միաձուլման մի ընդհանուր դործրեթաց, որից չկարո-  
ղացավ խուսափել նաև «Der Orient»-ը: Զուլվելով երեք այլ գիտական ամ-  
սագրերի հետ, այն վերածվեց մի միասնական պարբերականի<sup>66</sup>: Ինչ վերա-  
բերում էր «Orient im Bild»-ին, ապա ընկերությունը բարեկամների հետ  
կապը գեթ մասնակիորեն պահպանելու համար վճռեց 1940 թ. այն ժամա-

Մասնաճյուղի և նրա աշխատակիցների ու սաների ճակատագիրն այդպես էլ մնաց  
անհայտ:

62 P. F l e i s c h m a n n. Gott sitzt im Regimente.— OB, 1939, S. 37.

63 P. F l e i s c h m a n n. Jahresbericht 1939 der Dr. Lepsius Deutschen Orient-Mission,  
„Mitteilungen an unsere Mitglieder und Freunde!“, 1940, S. 23.

64 Նույն տեղում, էջ 23–24:

65 Նույն տեղում, էջ 24:

66 Նույն տեղում:

նակավորապես փոխարինել մի փոքրիկ տեղեկագրով, որի լույս ընծայումը նշված սահմանափակումներով էլ կարող խոչընդոտվել:

1939 թ. դեկտեմբերին լույս տեսավ «Orient im Bild»-ի վերջին համարը, որտեղ ընկերությունը դարձյալ հավաստում էր, հակառակ իրադրությունների բոլոր շրջադարձերին, իր գործունեությունը և սկզբունքներին հետադուր ևս հավատարիմ մնալու՝ իր անխախտ վճռականությունը. «Մեր գործը երբեք հանգամանքներից կախման մեջ չի լինի, ... Մենք ձեզ չենք լքի, սիրելի երեխաներ, նաև այս ժամին, երբ պատերազմը դարձյալ ձեր և մեր միջև բոլոր կամուրջները քանդել է, և դեռ չենք տեսնում, թե ինչպես պետք է դեպի ձեզ ճանապարհ գտնենք: Մենք մեր գործն այժմ ևս հանձնարարել ենք Նրան, որն ասել է. Ով իմ անունից մի այսպիսի երեխա ընդունի, նա կընդունի ինձ: ... Պատերազմը կարող է շատ մեծ արժեքներ ոչնչացնել, նաև շատ երիտասարդ կյանքեր, սակայն նրա մոլեգնությունն անգոր է մի սրբազան իշխանություն հանդեպ. սիրո իշխանություն, որն առանց հաշվի առնելու մարդկանց և ժողովուրդներին միմյանցից բաժանող արգելադրություններ՝ իր ճանապարհն է գտնում դեպի բոլոր զրկվածները: ... Աստված Սեր է»<sup>67</sup>:

Նույն ներշնչանքով և վճռականությամբ էր հատկանշվում նաև 1940 թ. սկզբից հրատարակվող փոքրիկ տեղեկագրերը, որ կրում էր «Mitteilungen an unsere Mitglieder und Freunde!» վերնագիրը: «Տերը, որի ծառայության մեջ մենք մեզ գիտակցում ենք, մեզ չի լքի, — նշված էր տեղեկագրում, — ... Եվ մենք նրանցից չենք, ովքեր նահանջում են: ... Մենք չենք հոգնի... Խոչընդոտները մեծ են, մասամբ շատ մեծ: Սակայն ավելի մեծ, քան բոլոր խոչընդոտները, նա է, որի հանձնարարությամբ և անունով մենք գործում ենք: Եվ նա այս մեծ խավարի մեջ մեզ ձայնում է. Դուք աշխարհի լույսն եք»<sup>68</sup>:

Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ին ուղղված պատերազմի անողոք մարտահրավերները, սակայն, շարունակվում էին՝ սպառնալով ամբողջովին կազմալուծել ընկերությունն ու նրա գործունեությունը: 1939 թ. վերջին ռազմաճակատ ուղարկվեց գրասենյակի ղեկավար է. Մինկները, իսկ այնուհետև նաև հողաբարձության անդամներ Հ. Գ. Կորսեպիուսը և Պֆանշմիդտը<sup>69</sup>: 1940 թ. մայիսին զորակոչվեց նաև ընկերության գրավաճառ Յ. Նութցենը<sup>70</sup>: 1940 թ. մայիսի 25-ին, 78 տարեկան հասակում իր մահկանացուն կնքեց ընկերության փոխնախագահ Ա. Վեկեսերը<sup>71</sup>: Նույն տարվա դեկտեմբերին ճակատ ուղարկվեց նաև գրասենյակի աշխատակից Գ. Շնայդերը, իսկ 1941 թ. հունիսին նրան հետևեց շրջիկ զեկուցող Հ. Մյուլլերը, որը մինչ այդ եռանդուն կերպով շարունակում էր ընկերության աշխատանք-

67 P. Fleischmann. Gott ist Liebe.— OB, 1939, S. 41.

68 P. Fleischmann. Ihr seid das Licht der Welt, „Mitteilungen an unsere Mitglieder und Freunde!“, 1940, S. 2-3.

69 Aus der Heimarbeit, S. 7.

70 P. Fleischmann. Unseren Freunden!, Geschäftsbericht 1940/41..., S. 1.

71 A. Albert Weckesser. Mitteilungen an unsere Mitglieder und Freunde!, 1940, S. 36.



ների պրոպագանդաման և բարեկամների հավաքագրման գործը<sup>72</sup>: Ի լրումն այդ ամենի, 1941 թ. փետրվարից արգելվեց նաև ընկերություն վերջին՝ «Mitteilungen an unsere Mitglieder und Freunde!» պարբերականի հրատարակությունը, որով ամբողջովին խզվեց առանց այն էլ կազմալուծված պարբերական տեղեկատվական կապը բարեկամների հետ:

Ստեղծված իրավիճակում Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի գործունեությունն ամբողջովին կաթվածահար կլիներ, եթե 1941 թ. բարեկամ շրջաններից հայ ժողովրդի երկու նվիրյալներ՝ օր. Վալցը և պաստորուհի Շնայգերը չստանձնեին գրասենյակային աշխատանքները վարելու և այգպիսով րացակա այրերին գեթ մասնակի փոխարինելու սլարտականությունը<sup>73</sup>: Մեծ օգնություն ցուցաբերեց նաև Ա. Կավուբչյանը, որ վերադառնալով Գերմանիա և դարձյալ մտնելով ընկերություն, զբաղվում էր հիմնականում շրջիկ զեկուցումներով<sup>74</sup>: Էսպես կարևորվեցին նաև Պոտսդամի գրասենյակում 1941 թ. պարբերաբար շարունակվող ամենամսյա հավաքությունները<sup>75</sup>, ինչպես և 1940 ու 1941 թթ. կազմակերպված երկու համաժողովները, որոնք կրում էին «Studienfreizeit» անվանումը, և որոնց թեմատիկ մեծ ընդգրկմամբ հատկանշվող զեկուցումներին ու քննարկումներին մասնակցում էին նաև բազմաթիվ բարեկամներ: Առաջին՝ 1940 թ. հունիսի 3–5-ը կայացած համաժողովում Հայաստանին և հայ ժողովրդին նվիրված ելույթների թվում առանձնահատուկ հետաքրքրություն հարուցեց հատկապես սլրոֆ. դր. Յաչկեի «Սանջակի քաղաքական նշանակությունը և հայերի զրկանքները» թեմայով զեկուցումը, իսկ երկրորդ՝ 1941 թ. հունիսի 10–12-ը կայացած համաժողովում՝ դր. Պ. Ռոհրբախի «Հայաստանը նախկինում և այժմ» ծավալուն զեկուցումը<sup>76</sup>:

Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի կողմից փաստորեն արվում էր առավելագույնը, խոչընդոտները հաղթահարելու և իրադրություն դրական փոփոխությունների ղեկավարում օգնության աշխատանքները վերստին հնարավոր դարձնելու համար, մինչդեռ ներկան շարունակ ավելի անոդոք, իսկ ապագան՝ մթին ու անորոշ էր դառնում: Վերոնշյալ համաժողովն ավանդական դարձնելու և Պոտսդամից գատ նաև այլ քաղաքներում կազմակերպելու ընկերության ծրագրերը<sup>77</sup> ցավոք չիրականացան, և 1941 թ. միջոցառումը դատապարտված էր դառնալու վերջինը: Ի դերե ելան նաև արդելված ամսագրերի փոխարեն առանձին գրքուկով մի հոդվածաչար հրատարակելու և բարեկամներին առաքելու հույսերը: Չնայած պրոպագանդայի նախարարությունից թույլտվությունը ստացվել էր, և «Արևելքի աշխարհից» վերնագիրը կրող գրքի շարվածքն ամբողջովին սլատրաստ էր, սակայն

72 P. Fleischmann. Unseren Freunden!, Geschäftsbericht 1940/41..., S. 1. P. Fleischmann. Aus dem Heimatdienst, „Mitteilungen an unsere Mitglieder und Freunde!“, 1941, S. 56.

73 P. Fleischmann. Unseren Freunden!, Geschäftsbericht 1940/41..., S. 1–2.

74 Նույն տեղում, էջ 2:

75 Նույն տեղում, էջ 3:

76 H. Müller. Orient-Missions-Freizeit in Potsdam, „Mitteilungen an unsere Mitglieder und Freunde!“, 1940, S. 33–34. P. Fleischmann. Unseren Freunden!, Geschäftsbericht 1940/1941..., S. 4–5.

77 Նույն տեղում, էջ 5:

հրապարակումը թղթի օգտագործումը սահմանափակող նոր որոշումների հետևանքով ձախողվեց<sup>78</sup>: Ընկերությունը կարողացավ հրապարակել և բարեկամներին առաքել միայն մի փոքրիկ տեղեկագիր, որ կրում էր «Geschäftsbericht 1940/1941 der Dr. Lepsius Deutschen Orient-Mission» անվանումը, և որտեղ համառոտ ի մի էին բերվում նշված տարիների ձեռքբերումները:

Այդ իրավիճակում, բնականաբար, մեծ կարևորություն էր ձեռք բերում ընկերության գրախանութի գործունեությունը, որտեղ շարունակվում էր Տեմպել հրատարակչության հրատարակած գրքերի վաճառքը<sup>79</sup>:

Պայքարն ու մաքառումները շարունակվեցին նաև հետագայում... Նույն վճռականությամբ, սակայն շարունակ ավելի տկարացող ուժերով: 1942 թ. սկսվեց առանց Ա. Կավուբջյանի աշխատակցության<sup>80</sup> և շրջիկ գեկուցողի նրա պարտականությունները, իր հնարավորությունների ներածին չափով, ստանձնեց ընկերության միակ տղամարդ աշխատակիցը՝ նախագահ Պ. Ֆլայշմանը: Նշված տարիներին Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի գործունեությունը հատկանշվում էր մի կողմից բարեկամների հետ հաղորդակցության այլընտրանքային ուղիների որոնման, և մյուս կողմից նոր համարումների ջանքերով, որոնք վկայում էին ստեղծված ծանր իրադրությունում չնահանջելու՝ ընկերության հաստատակամությունը: Այդ ջանքերը որոշակիորեն արդյունավորվեցին, երբ 1942 թ. բնդլայնվեցին նամակագրական կապերը ընկերության և նրա բարեկամների միջև, իսկ 1943 թ. հոգաբարձության կազմում ընտրվեց դր. Յոհ. Լեփսիուսի դուստրը՝ օր. Վիոլա Լեփսիուսը:

1943 թ. հրապարակվեց և բարեկամներին առաքվեց նաև «Geschäftsbericht 1942/1943 der Dr. Lepsius Deutschen Orient-Mission» անվանումը կրող մի տեղեկագիր, որը ոչ միայն վերջին երկու տարիների հաշվետվություն էր, այլև ընկերության կեսդարյա առաքելության գնահատականը և այդ առաքելությանը այդուհետև ևս հավատարիմ մնալու հավաստագիր: «Մենք չդիտենք, թե դրսում՝ Սիրիայում, իրադրությունն ինչպես է կերպավորվելու, – նշված էր տեղեկագրում, – այն, թե մենք երբ և ինչպես կկարողանանք աշխատանքը վերսկսել, կախված է պատերազմի ելքից՝ Սակայն մենք մեղ հետ դեպի անորոշ ապագա ենք տանում մի երրորդություն. բազում դժբախտ մանուկների դրկանքներից և կործանումից փրկած լինելու ուրախ գիտակցությունը: Երկրորդ, այնտեղ՝ դրսում, դերմանական սիրտ և ղոհաբերության հուշարձան կառուցած լինելու գիտակցությունը: Կարող են մեզ՝ գերմանացիներին, նաև մեր քրիստոնեությունը պախարակել, սակայն սիրտ այդ ծառայությունը անպատճառ կարժեպորվի:

78 Նույն տեղում, էջ 5–6:

79 1940 թ. գրախանութը հասարակայնությանն առջարկում էր ի թիվս այլ աշխատությունների դր. Յոհ. Լեփսիուսի «Գերմանիան և Հայաստանը», «Հայ ժողովրդի մահուդին», և Լ. Միլիտոնյանի «Զրույցներ մի Հայ քրիստոնյայի հետ» աշխատությունները, իսկ 1941 թ. փետրվարին, երբ Լեփսիուսի աշխատություններն արդեն սպառված էին, վաճառքի էին հանվել Մ. Կրիշչյանի «Գերմանիան և Հայերի բնաջնջումը» և Պ. Ֆլայշմանի «Միսիոներական ծառայություն մի քրիստոնյա նահատակ ժողովրդի համար» գրքերը (Unsere Buchhandlung, Geschäftsbericht 1940/1941..., S. 7):

80 Ա. Կավուբջյանի ճակատագրի մասին որևէ տեղեկություն չի հաղորդվում: Հավանական է, որ նա նույնպես ղորակոչվել էր բանակ:

վերջապես, երրորդ, ինչ էլ որ ապագան մեզ բերի, այդ առաքելությանը հավատարիմ մնալու վճիռը, քանի որ դա համահունչ է նրա ոգուն, որն ասել է. «Ես քաղցած էի, դուք ինձ կերակրեցիք, ես ծարավ էի, դուք ինձ ջուր տվեցիք...»: Եթե հիշենք քրդերի ճամբարներից հայ կանանց և երեխաների ազատագրումը, ապա Հիսուսի այդ խոսքը բառ առ բառ ուղեկից է եղել մեր գործունեությունը: Այդ մեզ թույլ է տալիս, չնայած բոլոր զրկանքներին և անորոշությունը, մնալ ուրախ և երախտապարտ...»<sup>81</sup>:

Տեղեկագիրը դարձավ Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի կեսդարյա գոյություն և անխոնջ հայանվեր գործունեության վերջին արգասիքը: Պատերազմում տեղի ունեցած մեծ բեկման, Գերմանիայի մեծացող ռազմական անհաջողությունների և երկրում ուժգնացող սոցիալ-տնտեսական ճգնաժամի պայմաններում ընկերությունը 1943 թ. այլևս չկարողանալով իր գոյամարտը շարունակել՝ հարկադրված եզրով ձուլվել Իեռլինի ավետարանական միսիոներական ընկերությունը:

## ПОСЛЕДНЯЯ БОРЬБА И ДОСТИЖЕНИЯ МИССИИ ИОАННЕСА ЛЕПСИУСА

ԱՇՈՏ ԱՅՐՈՒՆԻ

Р е з ю м е

В данной статье впервые полностью освещается последний период – 1933–1943 гг. всеобъемлющей деятельности организации Иоганнеса Лепсиуса “Германская миссия на востоке”, посвященной Армении и армянству. Деятельность эта характеризовалась, с одной стороны, проведением работ, связанных с заботой о сиротах и разными другими спасательными работами в Сирии (Алеппо, Кая Пунар), с другой стороны, осуществляемой широкомасштабной организационной и публицистической деятельностью в Германии, благодаря которой в беспрецедентно тяжелой для благотворительных и миссионерских организаций обстановке стали возможными не только материальная помощь общественности в проведении спасательных работ организации, но и решительная и эффективная борьба против политического подъема национал-социализма – возникающих в те годы многочисленных новых призывов против армянского народа.

## THE LAST STRUGGLE AND ACHIEVEMENTS OF JOHANNES LEPSIUS'S MISSION

ASHOT HAYRUNI

S u m m a r y

The universal activity of Johannes Lepsius's organization “German Mission in the East” devoted to Armenia and the Armenians during the years of 1933-1943 is entirely illustrated in the

81 Geschäftsbericht 1942/1943...



article for the first time. On the one hand it was characterized by the implemented works regarding the care of orphans and other rescue works accomplished in Syria (Aleppo, Kaya Punar) and on the other hand by the extensive organizational and publicistical activity in Germany, which, at that very difficult for the charitable and missionary associations time, promoted not only the provision of material assistance to the rescue works of the organization, but also to fight decisively and effectively against the political uplifting of national socialism– the coming out defiances against the Armenian people during those years.